

ՍԱՀՄՈՍ 111

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԵՐԸ փառաբանվում է Իր բարության համար	Փառք Աստծուն Իր հավատարմության և արդարության համար	Փառաբանության օրհներգ ՏԻՐՈՋԸ Իր մեծ գործերի համար	ՏԻՐՈՋԸ փառաբանություն	Փառաբանություն Յահվեի գործերի համար
<u>MT ներածություն</u> <u>Տկա</u>				
111:1-6	111:1	111:1-10	111:1ա 11:1բ-3	111:1ա 111:1բ-2
	111:2-6		111:4-6	111:3-4 111:5-6
111:7-10	111:7-9		111:7-10	111:7-8 111:9-10
	111:10			

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սաղմոս 111 և 112 ակրոստիկոս, իմաստասիրական սաղմոսներ են: Պոեմի յուրաքանչյուր տողը սկսում է երբայերեն այբուբենի հաջորդ տառով: Ակրոստիկոսը սկսում է Սաղմոս 111:1բ-ից:

Բ. Այս երկու Սաղմոսները նաև իրար հետ կապված են «Նրա արդարությունը հավիտյան է մնում» արտահայտությամբ, որը հանդիպում է Սաղմոսաց գրքում միայն Սաղմ.111:3 և Սաղմ. 112:3,9-ում:

Գ. Սաղմոս 111-ը փառաբանում է ՅԱՀՎԵԻՆ, մինչդեռ Սաղմոս 112-ը փառաբանում է ՅԱՀՎԵԻ հավատարիմ հետևորդներին:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 111:1-6

¹**ՏԻՐՈՋԸ փառաբանեցե՛ք: Ամբողջ սրտով ՏԻՐՈՋՆ եմ փառաբանելու ուղիղների ժողովում Ու հավաքույթի մեջ:**

²**ՏԻՐՈՋ գործերը մեծ են, ցանկալի այն բոլորին Որ սիրում են դրանք:**

³**Պատվարժան և փառավոր են Նրա գործերը, Եվ Նրա արդարությունը հավիտյան է մնում:**

⁴**Նա հիշել տվեց Իր հրաշալի գործերը. ՏԵՐԸ ողորմած ու գթած է:**

⁵**Կերակուր տվեց Իրենից վախեցողներին .**

Իր ուխտը հավիտյան հիշելու է:

⁶**Իր գործերի գորությունը ցույց տվեց Իր ժողովրդին, Որպեսզի նրանց տա հեթանոսների ժառանգությունը:**

111:1 «ՏԻՐՈՋԸ փառաբանեցե՛ք» Սա երբայերեն «ալելուիա» բառի թարգմանությունն է: Այն կազմված է «փառաբանեցե՛ք» (BDB 237 II, KB 248, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) ԲԱՅԻՑ և «*Suh*» (BDB 219) բառից: Այն մատնանշում է երկրպագության միջավայր և օգտագործվում է օրինաբանության համար՝ շատ Սաղմոսներ սկսելիս և ավարտելիս (այսինքն՝ Սաղմ. 102:18, 104:35, 105:45, 106:1,48, 111:1, 112:1, 113:1,9, 115:17,18, 116:19 և ևս քսանմեկ անգամ):

Օրինաբանության առանձնահատկությունը հաստատվում է Սաղմ. 111:1գ-ով:

Այս առաջին տողը ակրոստիկոսի մաս չի կազմում, այլ ծառայում է այս Սաղմոսի համար որպես վերնագիր:

❖ **«ՏԵՐ»** Սա Իսրայելի Աստծո ուխտի անունն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Դ.

❖ **«ՏԻՐՈՋՆ եմ փառաբանելու»** Ուշադրություն դարձրե՛ք առաջին տողի հետ զուգահեռակա- նությունը, տարբեր ձևով, սակայն նույն իմաստով:

1. ալելուիա – BDB 237, KB 248, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

2. փառաբանել – BDB 392, KB 389, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով

❖ **«ամբողջ սրտով»** Սա լիարժեք նվիրման համար օգտագործվող երբայերեն դարձվածք է (տես՝ Սաղմ. 9:1, 86:12, 138:1): «Միրտ» բառի համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻՐՏԸ:

❖ **«ուղիղների ժողովում ու հավաքույթի մեջ»** Այս արտահայտությունը կարող է նկատի ունենալ՝

1. տաճարում գտնվող մի խումբ երկրպագուների

2. երկու խմբի (տես՝ Սաղմ. 107:32)

ա. մի խումբ առաջնորդների (տես՝ Ելից 3:16)

բ. մեծ երկրպագության խումբ

111:2-6 Ուշադրություն դարձրե՛ք զուգահեռների՝

1. մեծ են ՏԻՐՈՋ գործերը, Սաղմ. 111:2ա

2. պատվարժան ու փառավոր են Նրա գործերը, Սաղմ. 111:3ա (տես՝ Սաղմ. 96:6, 104:1)
 3. հիշել տվեց Իր հրաշալի գործերը, Սաղմ. 111:4ա
 4. Իր գործերի գորությունը ցույց տվեց Իր ժողովրդին, Սաղմ. 111:6ա
- Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱԲԱՆՉԵԼԻ ԲԱՆԵՐ, տեսնելու այն տարբեր կերպերը, որով ՅԱՀՎԵՆ հայտնել է Իրեն Իր գործերի և խոսքերի միջոցով:

111:2բ Որպես ուսուցիչ, քարոզիչ, այս արտահայտությունը շատ տպավորիչ է ինձ համար. «Աստծո հայտնությունները հասանելի են բոլորին, սակայն պետք է ուսումնասիրել՝ խորհել և կիրառել» (տես՝ Սաղմ. 111:10բ, Եզրաս 7:10): Արդյո՞ք դու ուրախանում, ապրում ես դրանցով և սովորեցնում դրանք:

111:3բ «Նրա արդարությունը հավիտյան է մնում» Այս արտահայտությունը կրկնվում է Սաղմ. 112:3,9-ում և այլևս ոչ մի ուրիշ տեղ ճիշտ այս նույն բառերով: Սրանից կարելի է ենթադրել, որ Սաղմոս 111 և 112 գրվել են միևնույն անձի կողմից:

ՅԱՀՎԵՆ արդարության մասին պարբերաբար կրկնվող թեմայի շուրջ տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ:

«Մնում է» ԴԵՐԲԱՅԸ (BDB 763, KB 840) նաև կիրառվում է Սաղմ. 19:9-ում Աստծո հայտնության համար: Հիսուսը անդրադառնում է ՀԿ-ի ներշնչանքին և հավերժությանը Մատթ. 5:17-19:

111:4բ Աստծուն հավատալուց հետո կարևոր հարցերից մեկն այն է, թե ինչպիսին է Նա: Ինչպիսի՞ն է Նրա էությունը: Այս համարը արտացոլում է Իսրայելի Աստծո ՀԿ-յան բնավորությունը (տես՝ Ելից 34:6-7, Թվոց 14:18, 2 Օրինաց 4:31, Նեեմ. 9:17, Սաղմ. 86:15, 103:8, 145:8):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈՒ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ)

111:5-6 Այս համարները նկարագրում են Աստծո կատարած մի քանի գործեր՝

1. կերակուր է տալիս նրանց, ովքեր վախենում՝ ակնածում են Իրենից (այսինքն՝ Ելից և Թվոց, Մատթ. 6:11, 31-33)
2. հիշում է Իր ուխտը հավիտյան (այսինքն՝ սա վերաբերում է նահապետներին տրված Նրա խոստումներին, տես՝ Ծննդոց 12, 15, 18, 22, Սաղմ. 105:8, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻՆ ՏՎԱԾ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ)
3. Իրեն հայտնում է Իր ժողովրդին (տես՝ Սաղմ. 19:7-12)
4. ազգերը որպես ժառանգություն է տալիս Իր ժողովրդին՝
 - ա. Մեսիական իմաստով Սաղմ. 2:8, 67:7
 - բ. Քանանի նվաճման իմաստով Ծննդ. 15:12-21

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵՆ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 111:7-10

⁷Ճշմարտությունն ու իրավունքը Նրա ձեռքերի գործն են,
 Նրա բոլոր պատվիրանները վստահելի են:
⁸Հավիտյանս հավիտենից հաստատված են,
 Ճշմարտությամբ ու շիտակությամբ են ստեղծված:
⁹Նա փրկություն ուղարկեց Իր ժողովրդին,
 Հրամայեց Իր ուխտը հավիտյան պահել.
 Մուրբ ու պատվելի է Նրա անունը:
¹⁰Իմաստության սկիզբը ՏԻՐՈՉ երկյուղն է.
 Բարի խոհեմություն ունեն բոլոր նրանք,
 Որ կատարում են Նրա պատվիրանները.
 Նրա օրհնությունը հավիտյան է մնում:

111:7-10 Այս պարբերությունը հաստատում է Աստծո և Նրա հայտնության՝ խոստումների վստահելիությունը: Այն հիմք է գցում Սաղմոս 119-ի համար և արտացոլում՝ Սաղմոս 19-ը:

Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես են նկարագրվում Աստծո հայտնությունները՝

1. ճշմարտությունը և իրավունքը (տես՝ Սաղմ. 19:9)
2. վստահելի են (տես՝ Սաղմ. 19:7, 93:5)
3. հավիտյանս հավիտենից հաստատ են (տես՝ Սաղմ. 19:9)
4. ճշմարտությամբ և շիտակությամբ են ստեղծված

Նկատե՛ք, թե ինչպես է Աստված նկարագրվում՝

1. Նա փրկություն ուղարկեց Իր ժողովրդին
2. հրամայեց Իր ուխտը հավիտյան պահել
3. Նա սուրբ է և պատվելի

Նկատե՛ք այն տարբեր բառերը, որոնք կիրառվում են Նրա հայտնությունները նկարագրելու համար՝

1. կանոնները – BDB 824 (տես՝ Սաղմ. 19:8)
2. հրամանները – BDB 845 (տես՝ Սաղմ. 19:8. կիրառվում է ԳՈՅԱԿԱՆԸ, BDB 846)
3. վախ – BDB 432 (տես՝ Սաղմ. 19:9)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐ

111:7 «Նրա ձեռքերը» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՍԱՐԴ (անտրոպոմորֆիզմ)

❖ **«ճշմարտություն»** Այս ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 54) հանդիպում է Սաղմ. 111:7 և 8-ում: Այն բառացի «հավատարմություն» է: Այս նույն եբրայերեն արմատից (BDB 54) կազմվում է «հաստատ» բառը (BDB 52, *Niphal* ԴԵՐԲԱՅ) Սաղմ. 111:7 (տես՝ Սաղմ. 19:7):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍԱՀՆԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿՈՒՄ

111:8 «հավիտյանս հավիտենից» Մնայունության վերաբերյալ եբրայերեն այս դարձվածքը՝

1. հավիտյան – BDB 723 (տես՝ Սաղմ. 111:3,8, 112:3,9)
2. հավիտենից – BDB 761 (տես՝ Սաղմ. 111:9, 19:9, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ ('*olam*))

111:9 «փրկություն» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ, ՓՐԿԱԳՆԵԼ

❖ **«սուրբ»** «Սուրբ» (BDB 872) և «պատվելի» (BDB 431) բառերը հայտնվում են միասին Սաղմ. 99:3:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲԸ

❖ **«պատվելի»** Սա տարածված եբրայերեն «վախենալ» ԲԱՅՆ է (BDB 431, KB 432, *Niphal* ԴԵՐԲԱՅ): Այն կիրառվում է՝

1. հենց ՅԱՀՎԵԻ համար – 2 Օրինաց 7:21, 10:17,21, Նեեմ. 1:5, 4:14, 9:32, Սաղմ. 47:2, 68:35, 76:7, Դան. 9:4
2. Նրա գործերի համար – Սաղմ. 65:5, 66:3, 5, 106:22, 145:6
3. Իր ժողովրդի պատշան արձագանքի համար – 2 Օր. 4:10, 5:5, 6:2,13,24, 10:12,20, 13:11, 14:23, 17:13,19, 19:20, 21:21, 25:18, 28:58, 31:12, Հեսու 4:24

4. հեթանոսների համար – 2 Օրինաց 28:10, Հեսու 4:24, 9:24, Սաղմ . 67:7

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՎԱԽ (ՀԿ)

111:10ա Սա Առակացի առաջին սկզբունքն ու առանցքային թեման է (տես՝ Առակ . 1:7, 9:10), նաև ուշադրություն դարձրե՛ք Ժող . 12:13:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՊԱՀԵԼ

111:10բ Նկատե՛ք, որ Աստծո հայտնությունը իմանալը պահանջում է դրանց/դրան հնազանդություն: Աստվածաշնչյան հավատքը միայն աստվածաբանական դավանանք չէ հաստատելու համար, այլ ապրելակերպ (տես՝ Մատթ . 7:13-27, Եփես . 2:8-9,10):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ «ընկերության» մասին է Սաղմ . 111:1գ-ը անդրադառնում:
2. Արդյո՞ք Սաղմոսը մեզ ստույգ տալիս է, թե «ՏԻՐՈՋ որ գործերն» են մեծարվում:
3. Ինչպե՞ս է Սաղմ . 111:4բ կապված Ելից 34:6-7-ի հետ: